Մրցույթ՝ << ՀՀ Արարատի մարզի Դարբնիկի Ժորա Եսայանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի դասվարի (18 դասաժամ), հայոց լեզվի (6 դասաժամ), գրականության (2 դասաժամ), հայ գրականության (2 դասաժամ), արվեստի (5 դասաժամ), հայրենագիտության (2 դասաժամ), բնագիտության (1 դասաժամ), բնության (2 դասաժամ), կենսաբանության (13 դասաժամ), քիմիայի (13 դասաժամ), երաժշտության (3 դասաժամ) , կերպարվեստի (3 դասաժամ), տեխնոլոգիայի (4 դասաժամ) ինֆորմատիկայի (1 դասաժամ), ԹԳՀԳ-ի (11 դասաժամ) , բնության ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին :

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձև 1),

- 1 լուսանկար 3x4 չափի,

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

- անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (Ձև 5),

- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սեպտեմբերի 2-ից մինչև սեպտեմբերի 15 -ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա սեպտեմբերի 22 -ին ՝ ժամը 15:30-ին, <<<< Արարատի մարզի Դարբնիկի Ժորա Եսայանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ում. հասցեն՝ Արարատի մարզ, գ. Դարբնիկ Անդրանիկի 1:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (077) 99-99-81 հեռախոսահամարով: